Մարիամ Կարապետյան

«Պրակտիկում-1» դասընթացի ծրագիր և դասավանդման փորձի վերլուծություն

Նախաբան
***«Ժուռնալիստի վարպետություն»* և *«Պրակտիկում»* դասընթացները՝**
դասախոսների մոտեցումների խաչմերուկում

Թեև վերջին տարիներին փորձ է արվում կրթական գործընթացներն ավելի ու ավելի չափելի դարձնել՝ նկարագրվելով դրանք որոշակի բաղադրիչների տեսանկյունից, սակայն առարկայական ծրագրերը դեռևս հաճախ «հռչակագրեր» են ստացվում և ոչ միշտ են ներկայացնում դասավանդվող առարկայի փաստացի բովանդակությունը: Ժուռնալիստիկայի ֆակուլտետում դասավանդվող մասնագիտական երկու դասընթացների՝ *ժուռնալիստի վարպետության* և *պրակտիկումի* դեպքում գումարվում է նաև այն, որ դասընթացներն ավելի ստեղծագործական են ու ավելի շատ են կախված դասախոսի սուբյեկտիվ մոտեցումից: Եվ քանի որ մոտեցումների միօրինակացման հարցը հաճախ է թարմանում՝ մասնավորապես պայմանավորված տարբեր խմբերում ընդգրկված ուսանողների համար հավասար մրցակցային պայմաններ ապահովելու անհրաժեշտությամբ, ապա դասընթացի միասնական՝ բոլոր խմբերի համար ընդհանուր ծրագիր ունենալ-չունենալուց առաջ օգտակար է «գույքագրել» և ապա վերլուծել տարբեր դասախոսների կուտակած փորձը: Դասախոսների ինքնավերլուծության հնարավոր հարցեր կարող են լինել հետևյալները.

• Դասավանդման նախորդ տարիների ընթացքում կուտակված փորձի հիման վրա մշակված մոտեցումները և դրանց փոփոխությունները՝ պայմանավորված տվյալ տարվա լսարանով: Ըստ այսմ՝ անդրադարձ առարկայի կառուցման վերաբերյալ սեփական հիմնական պատկերացումների կայունությանը և փոփոխականությանը, իմպրովիզի, իրավիճակայինի և կայունի հարաբերակցությանը ժուռնալիստի վարպետություն և պրակտիկում դասավանդելիս:

• Ժանրերի վերաբերյալ դասախոսի դիրքորոշումը: Քննարկվո՞ւմ են արդյոք և ինչպե՞ս են քննարկվում դասընթացի շրջանակում լրագրային ժանրերը:

• Փաստացի կրթական վերջնարդյունքի վերլուծություն. ի՞նչ սովորեցին ուսանողները տվյալ ուսումնական տարում (այստեղ կարելի է դիմել առարկայական ծրագրեր կազմելիս մեր կիրառած ձևաչափին՝ գիտելիք և հմտություններ, կարողություններ, բայց ավելի կենդանի, գործնական օրինակներով, անձնական մեկնաբանություններով), և դասախոսն ի՞նչը թողեց հաջորդ տարվան: Ամեն դասախոս կարող է մեկ կամ մի քանի կետով գրել, թե իր պատկերացմամբ՝ որտեղ են կանգ առել, ինչը բաց մնաց, և ինչ հանձնարարական է տալիս ուսանողներին մյուս տարվա համար: Այս նյութը կարող է պիտանի լինել տվյալ խմբի հաջորդ տարվա դասախոսին, որպեսզի առարկան շարունակական զարգացում ունենա:

• Կարելի է նաև քննարկել *դասընթացի նյութի կարգացման* հարցն ինքնին. արդյո՞ք ուսումնական նյութը պետք է բաշխել ըստ թեմաների և դրանց մի մասը, դիցուք՝ տեղեկատվական ժանրերը, դասավանդել մեկ ուսումնական տարում, մյուս մասը, դիցուք՝ վերլուծական ժանրերը՝ հաջորդ ուսումնական տարում, թե՞ դասախոսը ոչ թե թեմաներ է «ժառանգում» հաջորդ տարվա դասախոսին, այլ հմտություններ: Իսկ գուցե առհասարակ նման բաշխում չի արվում, և դասախոսը փորձում է իր բոլոր գիտելիքների և փորձի հիման վրա տվյալ ուսումնական տարում փոխանցել առավելագույնը, քանի որ կարծում է, որ այս դասընթացների պարագայում առանձին դասախոսներն իրենց գիտելիքները և հմտությունները պետք է փոխանցեն ոչ թե մաս-մաս՝ կուրսից կուրս, կոնկրետ թեմաների հաջորդական շարքով, այլ ամեն դասախոս պետք է փոխանցի իր

կարողացածի հնարավոր ամբողջ ծավալով՝ համարելով, որ հաջորդ տարի էլ հաջորդ դասախոսն իր հմտությունների ծավալուն «փաթեթը» կփորձի փոխանցել: Այն է՝ բոլոր ժանրերի մասին՝ ինչ որ տվյալ դասախոսն է առավել կարևոր համարում տվյալ կուրսում, դասախոսի պատկերացրած բոլոր առանցքային հմտությունները՝ որքան որ ինքն է կարող փոխանցել տվյալ կուրսի հետ աշխատելիս:

Ուսանողների գրելու վարպետությունը զարգացնող այս դասընթացները, որոնց շրջանակներում շարունակ քննարկվում են լրագրողական ստեղծագործական գործընթացներն ու դրանց արդյունքները, առանցքային մասնագիտական սկզբունքների ներկայացման որոշակի զիգզագներ չեն կարող չունենալ. անգամ պարզից բարդ ժանրերին անցնելու սկզբունքով դասավանդելիս հաճախ հարկ է սկզբունքների ու հմտությունների «թռիչքաձև» անցումներ կատարել: Լրագրողական ցանկացած՝ անգամ կաղապարային տեքստ (ամենապարզը՝ լուրը) ենթադրում է նաև աշխատանք *մասնագիտական աշխատանքի ընդհանուր սկզբունքների և տեքստային կառուցվածքներ ստեղծելու բազմաչափ միտումների* հետ: Ուսանողների աշխատանքները քննարկելիս այդպիսի սկզբունքների ու միտումների քննարկման ծավալը միշտ կախված է դասախոսի պատկերացրած ընդգրկումների ծավալից: Այս դասընթացները, հետևաբար, չեն կարող մեծապես սուբյեկտիվ չլինել, որքան էլ ձևայնացված լինեն: Այս տեսանկյունից վարպետություն առարկան որոշ իմաստով դասախոսակենտրոն բնույթ ունի՝ դասավանդողի անձնական մոտեցումների և փորձառության շեշտադրմամբ: Այս «վտանգը», սակայն, չեզոքացվում է դասավանդման ժամանակակից մոտեցումների օգնությամբ, բացի այդ՝ կարող է չեզոքացվել *փորձի հղացականացման ու փոխանցման մեխանիզմների* ստեղծմամբ:

«Ժուռնալիստի վարպետություն» և «Պրակտիկում» դասընթացների դասավանդման ինչ մոտեցում էլ ընտրվի (*թեմաների վրա հիմնված, հմտությունների վրա հիմնված, դասախոսի անհատական փորձի «փաթեթի» վրա հիմնված և այլն*), բոլորն էլ հանգամանալի նկարագրության և վերլուծական անդրադարձի կարիք կունենան:

• «Կրթական խոստումը»՝ որպես դասախոսի հիմնական անելիքներից մեկը. ինքնավերլուծություններում օգտակար է նշելը, թե ինչ կարող է մեզանից ակնկալել համակարգը: Այս դեպքում ևս կարող են կիրառվել դասընթացի պլանում նշված խնդիրներն ու նպատակները, բայց դարձյալ ավելի կոնկրետ՝ օրինակների և նախորդ փորձի գնահատման վրա հիմնված: Սա կարող է նաև դասախոսի, առարկայի և վերջին օղակում նաև բուհի բրենդի ձևավորման կարևոր տարր դառնալ:

• Դասախոսի խմբագրական աշխատանքի փորձի վերլուծություն: Պատմում ենք՝ ինչպես ենք խմբագրում մեր ուսանողների նյութերը:

• Առարկայի դասավանդման վերաբերյալ դասախոսի մոտեցումների և ընտրած ռազմավարության արդյունավետության վերլուծություն: Կարելի է հենց SWOT վերլուծության միջոցով:

• Գնահատման փորձի վերլուծություն:

• Ուսանողների արձագանքի վերլուծություն:

• Առարկայի դասավանդման սեփական փորձի վերլուծություն այլ՝ այս ցանկում չներկայացված հարցերի դիտանկյունից:

Հաջորդիվ ներկայացվող ծրագիրը նման փորձ է, որն անդրադառնում է նշված հարցերի մի մասին միայն, սակայն արդեն իսկ անում է որոշ կարևոր ընդհանրացումներ դրանցից մի քանիսի վերաբերյալ:

Ծրագրի ձևաչափը համադրում է ինստիտուցիոնալ պահանջը և իմ՝ որպես դասախոսի ստեղծագործական ազատությունը. հերթական անգամ ներկայացնում եմ դասերից հետո ուսանողներին ուղարկածս որոշ տեքստերի օրինակներ[1]:

Ինչպես կարելի է տեսնել ծրագրում, այն ենթադրում է ժուռնալիստի վարպետության ու պրակտիկումի դասավանդման «հիբրիդային» մոդել՝ *ժանրերի դասավանդման տրամաբանության կիրառում* (բայց ոչ ժանրակենտրոն մոտեցում) + *կենտրոնացում տեքստի արտադրության գործոնների համալիրի վրա* (տեքստային և արտատեքստային գործոններ):

Տարբեր տարիների ուսանողների արձագանքները վերլուծելիս նկատում եմ, որ դրանք հաճախ բավականին տարբեր են լինում՝ անվստահությունից (մանավանդ դասավանդման սկզբում) մինչև խանդավառություն: Անվստահություն առաջացնում են *ընդհանրացումների, հակադրությունների կառուցման* ու *լրագրողական տեքստում սեփական դիրքի հետ կգույշ աշխատելու* վերաբերյալ դատողություններս: Չնայած ուսանողները սովոր են այնպիսի հղացքների, ինչպիսիք են օբյեկտիվությունը, տարբեր կարծիքները, մասնագիտական էթիկան, սակայն տեքստի կառուցվածքի մակարդակում դրանց իրացումն ավելի նուրբ ու բարդ աշխատանք է պահանջում, ինչը երբեմն «չափազանց հեռուն գնալու» տպավորություն է առաջացնում նրանց մոտ: Կարծես զգում են, որ այստեղ մի բան կա, որ զգաստություն ու հարգանք է առաջացնում, բայց նաև ընդունվածից ավելի շատ մտածելու անհրաժեշտություն, որին ոչ միշտ են համաձայնում: Այդուամենայնիվ, արձագանքը հիմնականում դրական է. աշխույժ դասապրոցեսն ուսանողներին մշտապես շարժման մեջ է պահում: Նրանք ընդունում են խաղի կանոններն ու ակտիվորեն մասնակցում:

Դասավանդման իմ փորձի ուժեղ կողմերից եմ համարում *բավմաչափ մտածողություն կարգացնելուն* միտված մեթոդների կիրառությունը, կենտրոնացումը մասնագիտական աշխատանքի *աննկատ մնացող բարդությունների* վրա: Թերություններից է այն, որ ոչ միշտ է հաջողվում հետևել խիստ վերջնաժամկետների. կիրառվող բազմաբնույթ հնարքների, կառուցողական մթնոլորտ ստեղծելու փորձերի պայմաններում ուսանողները որոշ դեպքերում կարողանում են իրենց տեքստերի պատրաստումը ձգձգելու հնարավորություն գտնել: Սա կարող է անհավասար մրցակցային պայմաններ ստեղծել այն խմբերի ուսանողների հետ, որոնցում վերջնաժամկետները երբեք չեն խախտվում: Խնդիր եմ համարում նաև այն, որ ինձ համար դեռևս պարզ չէ, թե արդյոք կարելի է անհակասական ձևով համադրել journalist.am-ի և INNO Media-ի համար հրապարակումներ պատրաստելու գործընթացը, հետևաբար ծրագիրն այս առնչությամբ պատասխաններ չի բովանդակում: Դասընթացի նպատակների բաժնում տեղադրելով նաև INNO MEDIA - YouTube –ի համալրումը՝ փաստացիորեն հում միտք եմ նշել:

Այսպիսով՝ ստորև ներկայացվող ծրագիրն ամփոփում է պրակտիկում-1-ի դասավանդման իմ կազմած պլանը՝ գումարած որոշ հատվածներ դասախոսություններից:

---

[1] Տե՛ս նաև Մ. Կարապետյան, Հայերենը իրադարձություններ ստեղծելիս. հաստատելը և քննադատելը, Երևան, Անտարես, 2025:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
«ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱԿԱԼԱՎՐԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱ՝ «ՊՐԱԿՏԻԿՈՒՄ – 1»

Դասախոս՝ Մարիամ Կարապետյան *(Ստորև ներկայացվող պլանը վերաբերում է «Պրակտիկում- 1» երկբաղադրիչ դասընթացի իմ կողմից դասավանդվող հատվածին):*

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Եթե նախորդ տարվա դասընթացը նպատակ ուներ ուսանողներին ծանոթացնելու լրագրողական տարբեր ժանրերով գրելու հիմնական սկզբունքներին, ապա այս տարվա դասընթացի նպատակն է ավելի խորքային հարցեր ու պատասխաններ տալ լրագրողի աշխատանքի վերաբերյալ՝ պահպանելով աշխատանքի գործնական բնույթը: Աշխատանքի հիմնական նպատակներից են լինելու ֆակուլտետի երկու մեդիահարթակների՝ journalist.am-ի և INNO MEDIA - YouTube –ի համալրումը որակյալ լրագրողական աշխատանքներով:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացն ավարտելուց հետո ուսանողը.

1. Կիմանա լրագրողական հրապարակում պատրաստելու հիմնական՝ «դասագրքային» սկզբունքները:
2. Պատկերացում կունենա լրագրողական տեքստի արտադրության ժամանակակից միտումների մասին:
3. Կկարողանա մեկնաբանել լրագրային ժանրերը՝ որպես *տարբեր հաղորդակցային իրադրություններում տարբեր տեղեկատվական կարիքներ բավարարելիս առավել նպատակահարմար տեքստերի արտադրության* կանոններ:
4. Կկարողանա նկատել ժանրերի առավելություններն ու թերությունները տարբեր տեսանկյուններից, ինչպես նաև *ժանրերի սահմանների հարաբերականությունը:*
5. Կկարողանա վերլուծել «ժուռնալիստի վարպետություն» և «Պրակտիկում» դասընթացների շրջանակներում ձեռք բերած գիտելիքը *լրագրողական տեքստի արտադրության կանոնների* վերաբերյալ:
6. Կկարողանա հրապարակումներ պատրաստել՝ *մեկնարկելով տարբեր սկզբունքներից* (ժանր, տեղեկատվական նպատակ, հաղորդակցային իրադրության առանձնահատկություններ և այլն):
7. Կկարողանա արտադրել լրագրողական տեքստեր տարբեր ժանրերով՝ այդ թվում կիրառելով ժամանակակից *այլընտրանքային-քննադատական մեդիապրակտիկաներին* բնորոշ որոշ մոտեցումներ:

8. Կկարողանա իր և ուրիշների լրագրողական հրապարակումների *գնահատման չափանիշներ* առաջադրել:
9. Առավել խորքային պատկերացում կունենա մասնագիտական առանցքային հասկացությունների վերաբերյալ, օրինակ՝ *պատմողի դիրքի, օբյեկտիվության, տարբեր տեղեկատվական աղբյուրների հետ աշխատելու առանձնահատկությունների* և այլն:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դասընթացի հիմնական մեթոդաբանական ուղենիշն է մասնագիտական գիտելիքի ու կարողությունների ձևավորումը *քննադատական մտածողության կարգացման գործիքներով*: Հետևաբար կիրառվում են տարբեր հնարքներ, որոնք լրագրողական հմտությունները զարգացնող դասընթացի շրջանակում *քննադատական մտածողության դասընթացի ներդրման* օրինակներ են:

Դասընթացի մեթոդական կողմի մյուս բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նախատեսվում է դասանյութի *կայուն մաս* և *փոփոխվող մաս*՝ կախված լսարանի առանձնահատկություններից: Այս կողմնորոշմանն է համապատասխանում *դասերից հետո ուսանողներին ուղարկվող տեքստերի* ձևաչափը, տեքստեր, որոնք նկարագրում, մեկնաբանում և ամփոփում են տվյալ օրը ծավալված քննարկումների ընթացքն ու հիմնական արդյունքները: Ուսանողների համար պատրաստվող տեքստերը ներառում են ինչպես ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ *ընդհանրական դրույթներ*, այնպես էլ *տվյալ թեմայի հետ լսարանում աշխատելու կոնկրետ փորձի վերլուծություն*:

Դասընթացը վարելիս կիրառվող մեթոդներից են նաև հետևյալ մեթոդները.

1. Անհատական աշխատանք: Ուսանողները լրագրողական նյութերի թեմաներ են առաջարկում, որոնք քննարկվում են լսարանում: Այնուհետև ուսանողները սկսում են աշխատել դրանց ուղղությամբ՝ ինքնուրույն ուսումնասիրելով թեման, կապ հաստատելով ապագա հրապարակման հերոսների, փորձագետների, պաշտոնյաների հետ: Իրենց ուսումնասիրություններն ամբողջացնում են տարբեր ժանրերի լրագրողական տեքստերով:
2. Լսարանային քննարկում և վերլուծություն: Ուսանողներն ընթերցում են սեփական նյութերը, այդուհետև լսում են կուրսընկերների դիտարկումները դրանց առավելությունների և թերությունների, ինչպես նաև դրանք բարելավելու հնարավոր ուղիների մասին: Փորձում են վերլուծական դարձնել սեփական մոտեցումը՝ նշելով *քննարկվող նյութը գնահատելու չափանիշները* և *իրենց սեփական վերլուծության* չափանիշները: Սա նպատակ ունի ուսանողների մոտ ոչ միայն գիտելիք և հմտություններ, այլև *մետագիտելիք* ձևավորել:
3. Խմբային աշխատանք: Ուսանողները բաժանվում են խմբերի և միասին հրապարակումներ պատրաստում: Գնահատում են մյուս խմբերի աշխատանքը:
4. Էբերհարդ Շտալի *խմբի կարգացման փուլերի մատրիցայի* կիրառում: Ցուցակագրվում են խմբային դինամիկայի հատկությունները, խմբային

աշխատանքի խոչընդոտները և համապատասխան գործողություններ են նախատեսվում դրանցից յուրաքանչյուրի համար:

5. Կոլբի շրջափուլի կիրառում: Ուսանողները
   ա/ ձեռք են բերում կոնկրետ թեմատիկ ուղղություններով, ժանրերով և ձևաչափերով աշխատելու փորձ
   բ/ լսարանային քննարկման ընթացքում այդ փորձը ենթարկվում է ռեֆլեքսիվ դիտարկման
   գ/ փորձը տեսականացվում է՝ ձևակերպվելով որպես մասնագիտական աշխատանքի հստակ սկզբունքներ
   դ/ ձեռք բերված արդյունքը ակտիվորեն փորձարկվում է դասընթացի շրջանակում հաջորդիվ գրվող լրագրողական տեքստերում:
6. Դերախաղ-բանավեճ: Ուսանողներից մեկը մասնագիտական որևէ պնդում է անում, որին հակաճառում է մեկ այլ ուսանող: Այդուհետև դերերը փոխվում են. հակաճառող կողմը փաստարկներ է բերում տվյալ պնդման օգտին, իսկ պնդման հեղինակը փաստարկներ է բերում դրա դեմ: Առաջադրանքի նպատակն է զարգացնել քննադատական մտածողությունը, ցույց տալ խնդիրների վերաբերյալ բազմաբաղադրիչ դիրքորոշում ձևավորելու գործընթացը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Դասընթացի շրջանակում ուսանողների առաջադիմությունը գնահատվում է բազմաբաղադրիչ համակարգով՝ ներառելով ընթացիկ քննություններ, ինքնուրույն աշխատանքը, ինչպես նաև մասնակցությունը:

1. Ընդհանուր բաշխումը՝ 20 միավորի համակարգով.

   - Առաջին ընթացիկ քննություն – 4 միավոր
   - Երկրորդ ընթացիկ քննություն – 5 միավոր
   - Ինքնուրույն աշխատանք – 8 միավոր
   - Դասընթացին ներկայություն և մասնակցություն – 3 միավոր

2. ԸՆթացիկ քննությունների և ինքնուրույն աշխատանքի գնահատման բաղադրիչները.

1) Տնային կամ լսարանային հանձնարարությունների կատարման որակ – 30%

   - Ժամկետների պահպանում, առաջադրանքի ամբողջական կատարում
   - Տեքստերի և սցենարների պատրաստում ըստ պահանջների

2) Լսարանային և ստուդիական աշխատանքներին ներգրավվածություն – 30%

   - Մասնակցություն խմբային առաջադրանքներին
   - Ակտիվություն քննարկումների ընթացքում

3) Ավարտուն լրագրողական նյութերի և նախագծերի ներկայացում – 40%

Գնահատվում է ներկայացված նյութերի քանակը և որակը՝ ըստ աշխատատարության, ամբողջականության, տեքստի կառուցվածքի հստակության և ստեղծագործականության: Հաշվի է առնվում նյութերը բարեփոխելու կարողությունը: Յուրաքանչյուր նյութը գնահատվում է առանձին, իսկ վերջնարդյունքը ձևավորվում է միավորների միջինացմամբ: Պատրաստի նյութերը նախ ընթերցվում են լսարանում, և ուսանողը հնարավորություն է ունենում կուրսընկերների ու դասախոսի խորհուրդներով բարեփոխել իր նյութը: Դասախոսին ուղարկվում է նյութի *փոփոխված տարբերակը*: Մինչև 0,5 միավոր հատկացվում է հրապարակված նյութերին: Ամփոփիչ էսսեն գնահատվում է ըստ ընդգրկման, վերլուծականության և ստեղծագործականության մակարդակի:

ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐ

Թեմա 1[2]

Ներածություն: Ինչ է ենթադրում «Պրակտիկում» դասընթացը, ինչով է այն նման «Ժուռնալիստի վարպետություն» դասընթացին և ինչով է տարբեր դրանից: Քննարկվում են ուսանողների ակնկալիքներն ու պատկերացումները դասընթացի վերաբերյալ, ձևակերպվում են խնդիրներն ու անելիքները: Որպես դասախոս՝ ներկայացնում եմ դասավանդման իմ մոտեցումները, ձևակերպում եմ այն ակնկալիքները, որ ուսանողները կարող են ունենալ ինձ հետ աշխատելու փորձառությունից: «Կրթական խոստումս»՝ *«Սովորելու ենք մի քիչ ավելի «ցավեցնել գլուխներս»՝ բարդ հարցեր տալով, որ պարզ լինի այն, ինչի համար ջանում ենք»:*

Որպես կիսամյակի հիմնական խնդիր՝ ձևակերպվում է *վերլուծական հրապարակումներ պատրաստելու հմտությունների զարգացումը*: Ուրվագծվում են լուսաբանման առաջին թեմաներն ու դրանց ներկայացման մոտեցումները:

<u>Տնային առաջադրանք</u>: Ուսանողներին հանձնարարվում է հոդվածի թեմա ընտրել և սկսել աշխատանքն անհրաժեշտ տեղեկությունների աղբյուրների հետ: Հաջորդ հանդիպմանը պետք է ներկայացնել կատարված աշխատանքը:

<u>Տեքստ դասից հետո</u>

«Սիրելի ուսանողներ, այսօր մեր քննարկած հարցերի թվում էր լրագրողի համալսարանական կրթության անհրաժեշտությունը: Այստեղ մեկ անգամ ևս նշեմ որոշ առանցքային դրույթներ:

Թերևս ամենակարևոր բաներից մեկը, որ կարող է տալ լրագրողի համալսարանական կրթությունը, սեփական դիրքորոշումները, պատմելու եղանակներն ու մոտեցումները *հարաբերականացնելու* կարողությունն է: Օրինակ՝ դու կարող ես լրագրող լինել որևէ լրատվամիջոցում, ունենալ քո ձեռագիրը, որը կարող է բարձր գնահատվել և մասնագիտական հաջողություն բերել քեզ: Անգամ այս դեպքում մոտեցումներդ կարող են քարանալ և մեկընդմիշտ «սահմանազատվել» մասնագիտական այլ ուղիներից: Այնինչ ակադեմիական կրթական միջավայրը պիտի ձգտի տարբեր մոտեցումներ փորձարկելու, դրանց սահմանները տեղաշարժելու

[2] Հանված են թեմաների դասավանդման ժամաքանակի մասին նշումները, քանի որ թեմաների ցանկը ներկայացնում է երկբաղադրիչ դասընթացի միայն մի հատվածը:

հմտություններ ու փորձառություն տալ քեզ, ցույց տալ հնարավորինս շատ *համատեքստեր*, որոնք տարբեր, հաճախ նաև հակադիր մոտեցումներ են պահանջում: Ուսանողությունը եզակի ժամանակամիջոց է սեփական հնարավորությունները փորձարկելու, տարբեր դիտանկյուններ գտնելու և այդ դիտանկյունների հարաբերականությունը հասկանալու համար:

Ուսանողներս հաճախ իրավացի տարակուսանք են հայտնում. տարբեր դասախոսների մոտեցումները երբեմն հակասում են իրար, թեև նրանցից ոչ մեկն էլ սխալ չէ: Այդ տարակուսանքին ի պատասխան՝ կարող եմ ասել, որ տարբեր մոտեցումների առկայությունը միանգամայն հասկանալի է, և չպետք է վախենալ դրանից: Տարբեր մոտեցումների հետ առնչվելը պատկերացում է տալիս *խմբագրական ոճերի ու քաղաքականությունների տարբերությունների* մասին, բացի այդ՝ օգնում է կոփել սեփական ձեռագիրը: Հեռու եմ այն մտքից, որ բոլոր դասախոսներն ամեն հարցում իրավացի են, բայց այստեղ էլ օգնության է գալիս քննադատական մտածողությունը. սովորեք ավելի շատ վստահել այն մարդկանց, որոնք իրենց խոսքում նաև *ցույց են տալիս սեփական դիրքորոշման «պիտանիության սահմանը»*, որոնք կարողանում են սեփական մոտեցումը բնութագրել որպես *հերթական մոտեցում այլ մոտեցումների շարքում՝* բացատրելով նաև դրա *պատշաճության չափը*, որոնք «կողմնակի» հայացք կարող են նետել իրենց մոտեցմանը: Սա, անշուշտ, չի նշանակում, որ մասնագիտական կայուն սկզբունքներ չկան: Այդպիսիք կան, բայց գրեթե միշտ կարելի է «բանակցել» դրանց առնչվող տարբեր հարցերի շուրջ...

Կարծում եմ՝ աշխատելու լավ ուղղություն է. *գրելու տարատեսակ հմտություններ ձեռք բերել, հետո փորձել հասկանալ դրանց «պիտանիության սահմանը»*...»:

Թեմա 2

Վերլուծական ժանրերի առանձնահատկությունները: Հիմնվելով «ժուռնալիստի վարպետություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքի վրա՝ քննարկվում են *վերլուծական լրագրության խնդիրներն ու հիմնական գործիքները*: Ուսանողները ներկայացնում են իրենց հոդվածների պատրաստման ընթացքը՝ զուգահեռաբար անդրադառնալով տեսական հարցերի:

<u>Լսարանային աշխատանք</u>: Ուսանողներին հանձնարարվում է վերլուծել սեփական փորձն անցյալ ուսումնական տարում, ապա ընթացիկ հոդվածի պատրաստման աշխատանքը՝ կիրառելով *խնդրի սահմանման տարբերակներ, ժանրի առանձնահատկություններ ու թելադրանքներ, ստեղծագործական մտահղացման թելադրանքներ, տեղեկության աղբյուրներ, հոդվածի կառուցվածք* եզրերը:

Թեմա 3

Վերլուծական ժանրերը գործնականում: «Տարբերությունների լայնույթը»: Ընթերցվում են ուսանողների պատրաստած հոդվածները: Քննարկվում է՝ ինչով են դրանք նման և ինչով են տարբեր: Քննարկման հիման վրա անդրադարձ է կատարվում հոդվածի «դասական» սահմանումներին և ժամանակակից լրագրության ազատություններին, այդ թվում՝ *այլընտրանքային մեդիապրակտիկաներին*:

<u>Տնային առաջադրանք</u>: Ուսանողներին հանձնարարվում է վերջնական տեսքի բերել իրենց հոդվածները՝ կիրառելով կուրսընկերների և դասախոսի խորհուրդները:

Թեմա 4

Կոլբի շրջափուլի 2-րդ և 3-րդ փուլերի համաձայն՝ ուսանողները *ռեֆլեքսիվ դիտարկման են ենթարկում* իրենց կատարած աշխատանքը և ապա *տեսականացնում են* այն՝ կիրառելով մասնագիտական եզրույթներ:

Նոր թեմա՝ *«Խնդրի ձևակերպումը հոդվածում: Հուշումներ և տարբերակներ»:* Քննարկվում են հոդվածի խնդրի ձևակերպման համար օգտակար որոշ ուղղություններ՝ *հիմնավորում վիճակագրության միջոցով, տարբեր շաղկապների փորձարկում՝ խնդրի պատճառահետևանքային և այլ առնչությունները բացահայտելու նպատակով* և այլն:

<u>Լսարանային աշխատանք</u>: Ուսանողներին առաջարկվում է հանրային կարևորություն ունեցող որևէ պնդում ձևակերպել: Ընտրվում է առաջարկված պնդումներից որևէ մեկը: Այդուհետև ուսանողներն ինքնուրույն փորձում են գտնել տվյալ պնդումը զարգացնելու մի քանի տարբերակներ՝ կիրառելով տարբեր շաղկապներ: Քննարկվում են առաջարկված տարբերակները: Վերլուծվում է՝ *ինչպիսի տեղեկության կարիք է առաջացնում* այս կամ այն շաղկապի բերած տրամաբանությունը: Միասին հաշվում ենք՝ որ տրամաբանությունն է գերակա եղել՝ պատճառի՞, ժամանակային հաջորդականությա՞ն, հիմունքի՞ և այլն:

<u>Տնային առաջադրանք</u>: Ուսանողներից յուրաքանչյուրը որևէ լրատվամիջոցից պետք է ընտրի իր կարծիքով հաջողված մի հոդված և վերլուծի, թե ինչ տրամաբանական կապեր է պարունակել տեքստը՝ *կուգահեռներ, հակադրություններ, իրադարձային կարգացման հաջորդականություն* և այլն:

<u>Տեքստ դասից հետո</u>

«*Հոդված: Խնդրի սահմանում, կրույցներ շահառուների հետ*

Սիրելի ուսանողներ, նախորդ մի քանի դասին բավականին խոսեցինք հոդվածի տարբեր կողմերի մասին: Վերջին դասին քննարկեցինք նախ այն հարցը, թե *ինչպես սահմանել խնդիրը հոդվածում*: Գիտեք, որ առանցքային խնդրի սահմանումն առաջնահերթ նշանակություն ունի հոդվածի համար: Եթե խնդիրը լայն ընդգրկում ունի, օրինակ՝ վերաբերում է հասարակության լայն հատվածի, ապա հնարավոր տարբերակներից մեկը *վիճակագրությանը* դիմելն է: Վիճակագրական տվյալները, սակայն, պետք է լրջությամբ ընտրվեն: Վերջերս շատ է տարածվել 10-20 հոգու շրջանում էլեկտրոնային հարցում անցկացնելը, ապա ստացված արդյունքները տոկոսային տեսքի բերելով՝ տարբեր եզրակացություններ անելը: Հորդորում եմ այդպես չվարվել: Պետք է հիշել, որ վիճակագրությունը լուրջ գիտություն է, որտեղ շատ կարևոր են ընտրանքը, հարցվողների թիվը, հարցերն ու ստացված պատասխանների գրագետ ընդհանրացումը: Տեխնոլոգիական միջոցները հեշտացրել են ու գայթակղիչ են դարձրել հարցումներ անցկացնելը, սակայն կարելի է վստահ ասել, որ վերևում նկարագրածս ձևով հարցումներ անելը հավասար է ապատեղեկատվության: Եթե 10 հոգու շրջանում եք հարցում արել, ապա ասեք, որ հարցվողները 10-ն են, որից 2-ը, ենթադրենք, X կարծիքն է հայտնել, 4-ը՝ Y, և այն: Եթե ձեր ստացած պատասխանների քանակը սահմանափակ է, իսկ տվյալների վերլուծության մեթոդաբանությունը՝ ոչ գիտական, ապա ավելի լավ է կենտրոնանալ *մարդկանց եկակի փորձառությունները պատմելու* վրա: Չէ՞ որ խնդիրներն ուշադրության արժանի են և՛ այն դեպքում, երբ դրանք 1000 հոգու են վերաբերում, և՛ այն դեպքում, երբ ընդամենը 1-2 հոգու են վերաբերում: Բացի այդ՝

անգամ 1000 հոգու վերաբերող խնդրի նկարագրությունը կարելի է սկսել եզակի փորձի ներկայացումից: Այս տրամաբանությամբ Հասմիկին խորհուրդ տվեցի համակարգչային կախվածության վերաբերյալ մեկ հոդված ևս պատրաստել: Այն պիտի կառուցված լինի դեպքի վերլուծության (case study) նմանությամբ. մեկ երեխայի պատմությամբ մոտենալ հոգեբանին և նրանից հանգամանալի մեկնաբանություններ խնդրել, թե ինչպես կարելի է վարվել կոնկրետ այս դեպքում: Լրագրողը կարծես հրապարակային հոգեբանական վերլուծության է տանում տվյալ պատմությունը: Հիշեք, որ եզակիի մասին ասվածն ավելի հաճախ է առարկայական լինում, քան ընդհանուրի մասին ասվածը: Անհիմն ընդհանրացումները հոդվածների հաճախ հանդիպող «վթարներից» են: Միշտ ասեք այն, ինչ հաստատ գիտեք, իսկ երբ կասկածում եք, *գրեք ձեր կասկածների մասին*՝ հստակ նշելով, որ կասկածում եք: «Փոքրացրեք» խնդիրն այնքան, մինչև կկարողանաք ճշգրիտ լինել դրա ներկայացման բոլոր դետալներում: Եթե որևէ բան լավ չեք հասկանում, երբեք մի գրեք դա այդ տեսքով՝ հուսալով, որ ձեր ընթերցողները ձեզանից խելացի են:

Այսպիսով՝ *հանրային նշանակություն ունեցող խնդիրներ կարելի է սահմանել և ապա քննարկել նաև եզակի պատմությունների օրինակով: Ավելի լավ է մոտիկից ներկայացնել տեսածդ քարը, իսկ հեռվից բացվող տեսարանի մասին ասել, որ հեռվից ես տեսել, քան թե 1-2 ընդհանուր բնույթի բան ասել «առհասարակ տեսարանների» մասին: Խնդիրները պետք է կոնկրետ ձևակերպվեն»*:

Թեմա 5

Քննարկվում են ուսանողների վերլուծությունները: Ընդհանրացում է արվում՝ որն է փաստերի ու հանգամանքների միջև տրամաբանական կապեր ստեղծելու՝ հոդվածագիր լրագրողների առավել հաճախ կիրառած եղանակը: Առանձին անդրադարձ է նվիրվում հակադրությունների ստեղծմանը: Քննարկվում է՝ ինչպես ստեղծել *տրամաբանական սխալներ չպարունակող հակադրություններ*: Տրամաբանված հակադրություններ ստեղծելու հմտությունը բնութագրվում է որպես լրագրողի կարևորագույն հմտություններից մեկը:

Տնային առաջադրանք: Ուսանողներին հանձնարարվում է լրագրողական որևէ նյութ գրել իրերց նախընտրած թեմայով ու ժանրով՝ հատուկ ուշադրություն դարձնելով հակադրություններին:

Տեքստ դասից հետո: «Հավանաբար հիշում եք սեղանի հետ համեմատությունս. մեկն ասում է՝ սեղանը նարնջագույն է, մյուսն ասում է՝ ոչ, սեղանը մեծ է: Այս սխալը շատ տարածված է: Համադրելի հատկանիշներ հակադրելու սկզբունքը տրամաբանական պարզ, բայց շատ հաճախ խախտվող կանոն է, մանավանդ երբ խոսքը մարդկային հարաբերությունների, սոցիալական բարդ ու խճճված խնդիրների մասին է: Հորդորում եմ ուշադիր լինել հակադրություններ կառուցելիս: Ձեր աշխատանքները մանրամասնորեն վերլուծելու ենք այս տեսանկյունից»:

Թեմա 6

Քննարկվում են ուսանողների գրած նյութերը: Ուսանողները պատասխանում են այն հարցին, թե ինչու են ընտրել այս կամ այն ժանրը: Քննարկման հիման վրա ամրապնդվում է նախորդ թեման և անցում է կատարվում նոր թեմային՝

«Հրապարակման պատրաստում՝ մեկնարկելով հաղորդակցային իրադրությունից և տեղեկատվական նպատակից»: Անդրադարձ է կատարվում ժանրերի ընտրության հիմքերին: Նշվում է, որ ժանրերն ինքնին նպատակներ չեն, և ավելի արհեստավարժ մոտեցում է *ընտրել ժանրը տեղեկատվական մտահղացման համատեքստում՝* որպես դրա բաղադրիչ և որպես տեղեկատվական նպատակին հասնելու քայլ:

Տեքստ դասից հետո

«Տարբեր ժանրերի մասին՝ տարբեր ժանրերի նյութերի առիթով

Հոդված: Փաստ, խնդրի շահառուներ, փաստերի մեկնաբանություն

Սիրելի ուսանողներ, ինչպես այսօր հերթական անգամ ընդգծեցինք, հոդված գրելու համար պետք է ունենալ որևէ խնդիր և վերլուծել այդ խնդիրը դրան վերաբերող փաստերի օգնությամբ: Ինչպես բազմիցս ասել ենք, հոդվածը կարելի է սկսել մարդկային պատմությունների մասին պատմող օրինակներից, վիճակագրությունից, որևէ իրադարձությունից և այլն: Քարացած մուտքեր չկան. հետևեք թեմայի տրամաբանությանը կամ ինքներդ պատմությունը զարգացնելու տրամաբանություն հորինեք: Կարևոր է, որ ցանկացած դատողություն ուղեկցվի փաստերով և հիմնված լինի փաստերի վրա, անգամ եթե հոդվածը գրում եք առաջին դեմքով: Փաստերն, իհարկե, իրականության մեջ «շարված» չեն այնպես, ինչպես, օրինակ, որևէ իրադարձության ընթացքում տեղի ունեցող գործողությունները: Դուք եք փնտրում այս կամ այն խնդրի հետ կապված փաստեր:

Երբ մտածում եք՝ ինչ է փաստը, ինչ փաստեր են պետք ձեր նյութի համար, և որտեղից գտնել դրանք, կարող եք.

ա/ ճշտել, թե ում է վերաբերում տվյալ խնդիրը. ովքեր են կրում տվյալ խնդրի հետևանքները, և ովքեր են տվյալ խնդրի համար պատասխանատու ի պաշտոնե

բ/քննարկել իրավական դաշտը, սոցիալական միջավայրը, պայմանները, որում խնդիրը ծագել է

գ/ուսումնասիրել՝ արդյոք լրատվամիջոցներն անդրադարձել են տվյալ հարցին. պիտանի հղումներ գտնել

դ/գտնել հնարավոր մեկնաբանողների, այսինքն՝ մարդկանց, որոնք կարող են բացատրել իրավիճակը, լույս սփռել տարբեր հանգամանքների վրա, արժանահավատ գնահատական տալ կամ մասնագիտական եզրակացություն անել:

Երբ արդեն ուրվագծել եք խնդիրը, պետք է այդուհետև ներկայացնեք խնդրի շահառուների վարկածները: Եթե խոսքը երեխայի համակարգչային կախվածության մասին է, ապա խնդրի շահառուներն են առաջին հերթին երեխան, ծնողները, ընտանիքի մյուս անդամները, դպրոցի ուսուցիչները: Նրանց տեսակետները ներկայացնելիս պետք է ուշադիր լինել, որ *կոնկրետ փաստարկներին համապատասխան փաստարկներ հակադրենք*:

Որպես *փաստերի մեկնաբանության* միջոցներից մեկը՝ առաջարկում եմ *համատեքստայնացումը*: Եվ այսպես, մտածեք, հետո կքննարկենք. համատեքստայնացումը՝ որպես վերլուծության գործիք, տվյալ խնդրի նկարագրությանը դրա համատեքստի նկարագրությունն ավելացնելը՝ որպես դրա դիրքի, ինչպես նաև «ինստիտուցիոնալ պատկանելության» նշան[3]: Համատեքստերի ավելացում լրագրային տեքստերում և տեքստերին: Դիրքի հետ չկապվող համատեքստ»:

---

[3] Տե՛ս Մ. Կարապետյան, նշվ. աշխ.:

«Ակնարկին նվիրված մեր դասի մասին

Սիրելի ուսանողներ, օգտակար եմ համարում նախորդ դասին տեղի ունեցած քննարկումը: Ձեզանից մի քանիսի գրած ակնարկների առիթով ակնարկի տարբեր կողմերին անդրադարձանք և կարևոր պնդումներ դուրս բերեցինք: Այստեղ ուզում եմ կրկին հիշեցնել Մարիամի միտքը, որ պետք է *արտացոլել հերոսիդ սուբյեկտիվությունը*, և իմ հորդորը ձեզ, որ «տեսքի եկավ» ձեր նյութերը լսելուց հետո. երբ ակնարկի հերոսի մասին պատմելիս շարունակ կիրառում եք նույն շարահյուսական կառույցները և ներկայացնելու նույն հնարքը, մի տեսակ «հարթ» տեքստ եք ստանում, որին պակասում է խորությունը: Խորության պակասը դուք հաճախ էիք նկատում միմյանց նյութերում՝ ասելով, որ դա կարելի է շտկել հերոսի մասին նոր մանրամասներ հիշատակելով: Ես ավելացրի, որ *խորության կարելի է հասնել նաև պատմելու ձևերը հաճախ փոխելու* միջոցով: Օրինակ՝ եթե հերոսի մասին պատմում են նրա մտերիմները, և դուք տեղադրում եք նրանց կարծիքներից մեկ-երկուսը, ապա կարելի է հաջորդ հատվածում հերոսի կյանքից որևէ իրադարձային դրվագ ներկայացնել, որը գործողության թարմություն կբերի տեքստ: Եթե ձեր հերոսն ընկերների պատմությունների միջոցով ուրվագծվում է որպես կարծես կայուն, «մշտական» հատկանիշներ ունեցող մեկը, ապա հաջորդ հատվածում նրան ներկայացրեք ինչ-որ անակնկալ իրավիճակներում, շարադրեք նրա մտքերը սեփական անձի մասին՝ նախապես խնդրելով նրան, օրինակ, պատմել իր կասկածների, երկմտանքների մասին:

Երբ խնդրեցի բնութագրել ակնարկի ժանրը, դուք հիմնականում ասացիք, որ պետք է ամեն բան իմանալ հերոսի մասին: Ես հորդորում եմ ձեզ «իջեցնել նշաձողը». հազիվ թե հնարավոր է ամեն բան իմանալ որևէ մեկի մասին: Անհրաժեշտ է հնարավորինս լավ ճանաչել նրան, բայց նաև հիշել, որ երբ հավակնում եք ամեն բան ասել, անհիրատեսական բեռ եք վերցնում ձեր ուսերին: Իսկ երբ գիտեք, որ սահմանափակ տեղեկություններ ունեք, ապա ձեր խոսքը պակաս հավակնոտ է լինում և ավելի առարկայական»:

«Հարցազրույց

Հարցազրույցի վերաբերյալ մեր քննարկումից ուզում եմ առանձնացնել հետևյալը. եթե զրուցում եք որևէ մեկի հետ նրա անձը բացահայտելու համար, միայն ծայրահեղ դեպքում ապավինեք հարցերը գրավոր ուղարկելու և գրավոր պատասխաններ ստանալու ռազմավարությանը: Միշտ աշխատեք անձամբ զրուցել և պատրաստ եղեք հարցից հարց բխեցնել»:

Թեմա 7

Աշխատանք տեղեկության տեքստային աղբյուրների հետ

<u>Լսարանային աշխատանք</u>: Ուսանողները բացում են հանձնարարվող տեքստային աղբյուրը, որը կարող է լինել, օրինակ, կառավարության որևէ նիստի արձանագրություն: Հպանցիկ ընթերցմամբ ընդհանուր պատկերացում են կազմում տեքստի մասին, այդուհետև հարցեր են ձևակերպում, որոնց պատասխաններն անհրաժեշտ են տեքստի ամբողջական ընկալման համար: Հացերի պատասխաններն այդ փուլում չեն գտնում: Փոխարենը լուր են գրում հպանցիկ ընթերցված տեքստի հիման վրա: Առաջադրանքը նպատակ ունի զարգացնել *համատեքստերի հետ աշխատելու*

վարպետությունն ու համատեքստերի նկատմամբ զգայունությունը: Քննարկվում է՝ ինչպես կարելի է *խուսափել համատեքստը խեղաթյուրելու, տրամանաբությունը փոխելու և կապերն անտեսելու սխալներից,* անգամ երբ մի քանի բոպե ունես թեմային ծանոթանալու և դրա մասին գրելու համար:

Տնային առաջադրանք: Նյութ պատրաստել կառավարության տվյալ նիստի վերաբերյալ՝ մեկնարկելով դասի ընթացքում կազմած հարցերից: Առաջադրանքը ենթադրում է կառավարության նիստի մասին պատմել ոչ թե տեղեկատվական ձևաչափով, այլ վերլուծական, քանի որ նախապես ձևակերպված հարցերի առկայությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ուսանողի առավելապես այս կամ այն հարցերն են հետաքրքրում: Ուսանողներին առաջադրանք է տրվում *տեքստում սահմանել իրենց դիտակետը և չխաբել ընթերցողին*:

Տեքստ դասից հետո: «*Աշխատանք տեղեկության աղբյուրի հետ՝ հարցեր փնտրելուց մինչև պատասխաններ շարադրելը*

Սիրելի ուսանողներ, ուզում եմ մի քանի ընդհանրացում անել մեր նախորդ դասի վերաբերյալ: Ես ձեզ կառավարության նիստի մասին պատմող տեքստ տվեցի և խնդրեցի արագ աչքի անցկացնել այդ բավականին երկար տեքստը: Այնուհետև հանձնարարեցի կարդացածի վերաբերյալ հարցեր ձևակերպել և դրանց պատասխանները փնտրել տեքստում՝ այն ավելի մանրամասն ընթերցելով: Աշխատանքը նպատակ ուներ ձեր ուշադրությունը հրավիրելու այն մտավոր գործընթացի վրա, որը տեղի է ունենում, երբ կցկտուր տեղեկությունների հիման վրա փորձում ես հարցեր կառուցել (այսինքն՝ *ձևակերպում ես այն, ինչ չգիտես*, և այն, *ինչ հետաքրքրում է քեզ*), իսկ հաջորդ փուլում տեղեկության աղբյուրն ուսումնասիրում ես հենց այդ հարցերին պատասխաններ գտնելու համար: Երբ չգիտես՝ ինչ ես փնտրում, հայացքդ ավելի բաց է, միևնույն ժամանակ անպատրաստ: Մի կողմից՝ այն տարբեր հանգամանքներ է հայտնաբերում, մյուս կողմից՝ կարող է վրիպել և չնկատել որոշ կարևոր փաստեր, կապեր և տրամաբանություններ: Երբ պատրաստի հարցերով ես մոտենում տեղեկության աղբյուրին, աշխատանքդ դառնում է ուղղորդված. հետամուտ ես լինում տվյալ հարցի «տրամաբանության թելին», բայց փոխարենը քեզ կարող են անկարևոր թվալ որոշ մանրամասնություններ, որոնք, օրինակ, կողմնակի առնչություն ունեն քո հարցի հետ: Այդ պատճառով էլ կարևոր է, որ տեղեկության աղբյուրի հետ աշխատելիս, հարցեր ձևակերպելիս և դրանց պատասխաններ փնտրելիս փորձենք համադրել այս երկու հայացքները՝ *կոնկրետ բան չփնտրող* և *կոնկրետ հարցով վինված*:

Այնուհետև խնդրեցի լուր գրել մինչև վերջ չընթերցված տեքստի հիման վրա՝ պատմելով կառավարության նիստի մասին: Քանի որ տեքստը երկար էր, նիստի ընթացքում քննարկված հարցերը՝ շատ, բարդ էր դրանք լուրի մեջ տեղավորելը: Բացի այդ՝ իրավացի առարկություն եղավ, որ բարդ է լուր գրել մինչև վերջ չընթերցված տեքստի հիման վրա: Ընդունելի համարելով առարկությունը՝ ես, այդուամենայնիվ, խնդրեցի կատարել հանձնարարությունը: Դա ձեզ մոտ բավականին լավ ստացվեց, բայց երբեմն խնդիրներ կային մասնավորապես թեմայից թեմա անցումներում: Խորհուրդներիցս մեկը ամեն հաջորդ թեման բացելիս *թեմայի փոփոխությունն անմիջապես ապդարարելն* էր, որպեսզի ընթերցողը տպավորություն չունենա, թե դեռ նախորդ թեմային վերաբերող բան է կարդում: Մեկ այլ կարևոր նկատառում էր այն, որ հարկ է շատ ուշադիր լինել տվյալ թեման ներկայացնելու համար ընտրված մտքին: Ձեզանից ոմանք ընտրել էին որոշ կարևոր դրվագներ, սակայն ցույց չէին տվել տվյալ հարցի համատեքստը: Ընդհանրացումս հետևյալն էր. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԿԱՐՈՂ Է

ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՄԱՏԵՔՍՏԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՁԵՐ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՏԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ: Անգամ երբ մի քանի րոպե ունեք թեմային ծանոթանալու և դրա մասին գրելու համար, պետք է *ամեն կերպ խուսափել համատեքստը խեղաթյուրելու, տրամաբանությունը փոխելու և կապերն անտեսելու սխալներից*: Գրելու վարպետությունը մեծ չափով կախված է նրանից, թե *որքան հմտորեն եք դուք կարողանում խոսել ձեր ունեցած տեղեկությունների շղթայում բացակայող օղակների մասին*:

Հաջորդ հանձնարարությունս հետևյալն է՝ նյութ պատրաստել կառավարության տվյալ նիստի վերաբերյալ՝ մեկնարկելով ձեր հարցերից: Սա ենթադրում է, որ դուք պետք է կառավարության նիստի մասին պատմեք ոչ թե տեղեկատվական ձևաչափով, այլ վերլուծական, քանի որ ձեր ձևակերպած հարցերը նշանակում են, որ ձեզ առավելապես այս կամ այն հարցն է հետաքրքրում: Բայց այստեղ կարևոր է, որ կարողանաք հստակ սահմանել ձեր այս դիտակետը և չխաբեք ընթերցողին:

Աշխատանքները կքննարկենք հաջորդ դասին:

Հաջողություն եմ մաղթում առաջադրանքը կատարելիս:

Սիրով՝ Մարիամ Կարապետյան»

Շաբաթ 8

Ընթացիկ քննություն

Թեմա 9

Տեղեկության կրճատման սկզբունքները: Մեկ անգամ ևս անդրադարձ է կատարվում նախորդիվ քննարկված տեքստային աղբյուրին: Քննարկվում են դրա կրճատման և տեղեկությունների ընտրության, ինչպես նաև նոր՝ պակասող տեղեկությունների հավելման սկզբունքները տարբեր ժանրերի դիտանկյունից:

Նշվում է, որ երբ թեման ծավալուն է, դիցուք՝ պետք է կառավարության նիստի սղագրությունը լրագրողական տեքստի վերածել, երեք տարբերակ ունենք: Կա՛մ լուր ենք գրում՝ գոհանալով միայն ընդհանուր տեղեկություններով, կա՛մ, լրագրողների սիրած բառով ասած, «լավաշ» նյութ ենք պատրաստում, որ խրախուսելի տարբերակ չէ, կա՛մ թեման լուսաբանում ենք կոնկերտ հարցերի դիտանկյունից՝ հստակ սահմանելով մեր դիրքը: Այսպես տեղեկատվական նյութը լրագրողի դիրքի ընդգծման հետևանքով վերլուծական հրապարակման որոշ երանգներ է ստանում[4]:

Լսարանային աշխատանք: Ուսանողները բաժանվում են խմբերի և կրճատում նյութը՝ ըստ տարբեր ժանրերի պահանջների: Ամեն խումբն աշխատում է մեկ ժանրի շրջանակներում:

Թեմա 10

Հոդվածի «սահմանները». լոնգրիդ: Ուսանողները դասի ընթացքում ծանոթանում են տվյալ ժանրով գրված որևէ հրապարակման և ապա քննարկում այն: Ցույց են տրվում պատմելու եղանակների առանձնահատկությունները լոնգրիդներում:

---

[4] Այդպիսի օրինակ տե՛ս Մ. Կարապետյան, «Ամենամյա ամփոփիչ գիտաժողով 2024»-ի արտագնա օրերը՝ հումանիտար հետազոտողի պատմելով, https://hetq.am/hy/article/171592 (14.12.2025):

Տնային առաջադրանք: Ուսանողները գրում են նոր հոդված և *պատմելու եղանակների* տեսանկյունից վերլուծում են այն:

Թեմա 11

Քննարկվում են ուսանողների պատրաստած հոդվածները կամ դրանց պատրաստման ընթացքը: Քննարկումն ընթանում է նոր թեմայի ուղղությամբ՝ *«Փաստը՝ որպես նպատակ, գործիք և արտահայտչամիջոց»:* Դասի ավարտին ձևակերպվում են դուրս բերված հիմնական դրույթները:

Տնային առաջադրանք: Ուսանողներին հանձնարարվում է իրենց նախորդ նյութի թեմայով մեկ այլ նյութ գրել՝ հոդվածի կամ իրենց ընտրած որևէ այլ ժանրով:

Թեմա 12

Քննարկվում են կատարված աշխատանքի արդյունքները: Որպես ամփոփիչ քննարկման վերնագիր՝ ձևակերպվում է նոր թեման՝ *«Նույն թեման՝ լուսաբանման տարբեր եղանակներով»*[5]:

Տնային առաջադրանք: Ուսանողները ծանոթանում են նույն թեմայով գրված երեք տարբեր նյութերի, ապա վերլուծում են դրանց առավելություններն ու թերությունները: Առաջադրանքը կատարելու մեկ այլ տարբերակ է *թեմատիկ մամուլի տեսությունը*, որի դեպքում ուսանողներն իրենք են ընտրում համեմատվող նյութերը:

Թեմա 13

Քննարկվում են ուսանողների կատարած վերլուծությունները:

Նոր թեմա՝ *«Տեղեկություն տեղեկություն գտնելու ճանապարհի մասին»*:

Նշվում է, որ որևէ տեքստի հեղինակի, նաև լրագրողի համար կարևոր է, որ նա կարողանա իր տեքստում ցույց տալ *իր մասնակցության բնույթն ու չափը*: Քննարկվում է այն հարցը, թե ինչպես պետք է ցույց տալ սեփական դիրքը նյութում, երբ քննարկվող հարցի վերաբերյալ կոնկրետ հետաքրքրություններ ունես, իսկ թեման շատ ծավալուն է: Հիշատակվում են համապատասխան օրինակներ լրատվամիջոցներից: Օրինակ՝ պատմում եմ՝ ինչպես եմ ինքս փորձել լուսաբանել մի իրադարձություն սեփական հետաքրքրություններիս դիրքից[6]՝ միևնույն ժամանակ խուսափելով միջոցառման կցկտուր ու կողմնակալ ներկայացումից:

Տեքստ դասից հետո

«Սիրելի ուսանողներ, այսօրվա մեր դասի կարևոր արձանագրումներից եմ համարում այն միտքը, որ երբեմն ուզում ես քո ներկայությունը տեքստում ինչ-որ մի կետում սահմանափակել, սակայն տեքստն իր տրամաբանությունն ունի և պահանջում է հետևել ընտրածդ միջոցին, անհակասական ձևով ավարտին հասցնել այն: Պատկերավոր ասած՝ եթե որոշել ես խաղ սկսել, ապա պիտի խաղի կանոնները պահպանես: Այսպես՝ ցույց տալով իմ ներկայությունն ու դիրքը նյութերիցս մեկի սկզբում՝ ես պետք է զարգացում տայի դրանց նյութի այլ մասերում: Ըստ այսմ՝ նյութի միջնամասում պատմելով պաշտոնյային տվածս հարցի մասին՝ ես նաև անուղղակիորեն զարգացրի այն որպես հումանիտար հետազոտողի հարց, որովհետև նյութի սկզբում այդպես էի բնութագրել լուսաբանողի իմ դիրքը: Հիշեք. *լավն է այն նյութը, որտեղ*

---

[5] Տե՛ս Մ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 327-330:

[6] Տե՛ս Մ. Կարապետյան, «Ամենամյա ամփոփիչ գիտաժողով 2024»-ի արտագնա օրերը՝ հումանիտար հետազոտողի պատմելով, https://hetq.am/hy/article/171592 (14.12.2025):

արծարծված բոլոր թեմաները համապատասխան կարգացում ու եզրափակում են գտնում (թեկուզ մեկ նախադասությամբ), պատմելու ընտրված ձևերը «կիսատ» չեն մնում, ինչպես նաև չեն հակասում փոխանցվող բովանդակությանը, ավելին՝ լրացնում են բովանդակությունը:

Անդրադարձանք նաև օբյեկտիվությանը: Նշեցինք, որ օբյեկտիվության պահանջը հաճախ վերացական է մնում լրագրությամբ զբաղվողների համար, մինչդեռ լրագրողի օբյեկտիվությունը չպիտի միայն ընդհանուր մասնագիտական սկզբունք լինի: Այո, լրագրողի օբյեկտիվությունը ենթադրում է կարծիքների ներկայացման հավասարություն և փաստերի ու կարծիքների տարանջատում՝ գումարած մասնագիտական էթիկայի կանոնների թելադրած մյուս հիմնական սկզբունքները: Լրագրողի օբյեկտիվությունը, սակայն, պիտի նաև *հստակ տեքստային ձև ունենա*, արտացոլվի լրագրողի ընտրած շարադրման եղանակների մեջ: Դրանցից մեկն է *հեղինակի միջամտության չափի ցուցադրությունը*[7]:

«Հետք»-ի հրապարակած մեկ այլ նյութում, որը քննարկեցինք, լրագրողը փորձում էր ավելի «համեստ» ու գիտակից դարձնել իր վերլուծությունը մասնավորապես *սեփական կասկածների մասին նրբորեն ակնարկելու* միջոցով: Անդրադառնալով տեղեկություն ստանալու իր հարցման պատասխանին՝ նա նկատում էր, որ իր հարցերը, *ըստ երևույթին*, պատասխան չեն ստացել: Առաջարկում եմ նյութեր գրելիս ձեր մասնագիտական միջամտությունը հավաստող այսպիսի նուրբ հետքեր թողնել. դրանք կարևոր են, երբ ուզում եք հնարավորինս ճշգրիտ լինել:

Առաջարկում եմ ձեր փորձից հիշել իրավիճակներ, երբ հարկ եք համարել այս կամ այն թեման լուսաբանող ձեր լրագրողական տեքստում պատմել նաև՝ ինչպես եք հանգել այս կամ այն աղբյուրին դիմելու, տեքստն այս կամ այն կերպ շարադրելու գաղափարներին: Փորձեք վերլուծել՝ որ դեպքերում է, որ տեքստի պատրաստման ընթացքին վերաբերող այդ պատմությունները չեն ներառվել տեքստում, բայց դրանք պատմել եք լսարանում՝ ձեր պատրաստած նյութերն ընթերցելուց առաջ: Ըստ այդմ՝ կքննարկենք *«բաց թողնվող» հանգամանքների նշանակությունը*»:

Թեմա 14: *Կիսամյակն ամփոփող էսսեին վերաբերող հարցերի քննարկում*[8]: Տրամադրվում են հղացքները, որոնց շուրջ պետք է կառուցել ամփոփիչ էսսեն[9]: Քննարկվում են ժանրի առանձնահատկությունները:

Նշվում է, որ ամփոփիչ էսսեն պատրաստելիս պետք է ուշադրության կենտրոնում պահել հետևյալ կետերը՝

ա/ *աշխատանք փաստերի հետ* (ինչ է քննարկվել դասի ընթացքում, որոնք են հիմնական փաստերը)

բ/ *աշխատանք փաստերի վերլուծության ուղղությամբ* (ուսանողները փորձում են գնահատել, մեկնաբանել, առարկել, հաստատել, օրինակներ բերել, անդրադառնալ իրենց լրագրողական աշխատանքի ընթացքում հանդիպած համանման հարցերի, ցույց տալ՝ ինչպես կարող է այս կամ այն գիտելիքը պիտանի լինել իրենց համար)

---

[7] Տե՛ս նաև Մ. Կարապետյան, Հայերենը իրադարձություններ ստեղծելիս, էջ 330-336:

[8] Կախված խմբի առանձնահատկություններից՝ էսսեի առաջադրանքը հանձնարարվում է կա՛մ «Պրակտիկում 1», կա՛մ «Պրակտիկում 2» դասընթացի ավարտին:

[9] Հանձնարարության կատարման օրինակ տե՛ս Մ. Կարապետյան, Մեծ էսսե էսսեների կտորներից՝ այն մասին, թե ինչ կար ու ինչ քննարկվեց պրակտիկումի խմբերից մեկում, https://www.journalist.am/article/204 (15.12.2025):

գ/ *աշխատանք սեփական վերաբերմունքի հետ* (պատմում են՝ ինչով են խանդավառված կամ ինչի նկատմամբ են անտարբեր, ինչից են հիասթափված և այլն՝ միևնույն ժամանակ փորձելով «կողքից» նայել սեփական զգացողություններին ու քննադատել դրանք):

Անհրաժեշտ է կապեր հաստատեք քննարկված տարբեր թեմաների միջև, եթե ուսանողները կորոշեն անդրադառնալ քննարկված բոլոր հարցերին: Պետք է փորձել կապեր հաստատելու ստեղծագործ ուղիներ գտնել: Օրինակ՝ եթե չեն հիշում՝ ինչ է քննարկվել այս կամ այն խորագրի տակ, կարելի է դիմել ընկերներին և էսսեում պատմել նաև այն մասին, թե ով որ հարցն է լավ հիշում, ինչն է ամենից լավ տպավորվել իրենց և իրենց ընկերների հիշողության մեջ: Այսպես ուսանողները թեմաների ներկայացման *իրադարձային եղանակ* կգտնեն, այն է՝ ցույց կտան, թե ինչպես են աշխատել էսսեն գրելիս, որտեղից ուր են գնացել: Մեկ այլ տարբերակ է բացատրելը, թե ինչ կերպ է մի թեման կապված մյուսի հետ, և արդյո՞ք մեր դասերը որևէ ընդհանուր արդյունքի հասել են:

Ուսանողներին հորդորում եմ հնարավորինս ստեղծագործ լինել:

<u>Տնային առաջադրանք</u>: Գրել ամփոփիչ էսսե՝ պատմելով քննարկված մասնագիտական հղացքների հետ աշխատանքի մասին:

Շաբաթ 15

Երկրորդ ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանքների գնահատում:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Կարապետյան, Հայերենը իրադարձություններ ստեղծելիս. հաստատելը և քննադատելը, Երևան, Անտարես, 2025:
2. Զ. Վայշենբերգ, Լրատվական ժուռնալիզմ, Երևան, 2013:
3. Լրատվության հիմունքներ. գործնական ձեռնարկ լրագրողների համար, ProMedia, Երևան, 2003:
4. Моисеев В. А., Журналистика и журналисты, Киев, 2002.
5. Градюшко А. А. , Цифровая журналистика : пособие: БГУ, Минск, 2021.
6. Гиссен Г. В, Медиа. Адекватное пулицирование, Гуманитарный центр, Харьков, 2012.
7. Burns L. Sh., Matthews B. J., Understanding Journalism, University of Western Sydney, Australia, 2018.
8. Zilin Lin, Kasper Welbers, Susan Vermeer, Damian Trilling (2022), Beyond Discrete Genres: Mapping News Items onto a Multidimensional Framework of Genre Cues.
9. Stiekolshchykova, Savchuk, Makarchuk, Filatenko, Humanenko, Shoturma (2022), Influential Modifications of the Genre System of Modern Mass Media.
10. Yngve Benestad Hågvar, Harald Hornmoen, Jørgen Alnæs, *Narrative Theory in Journalistic Practice: Understanding Emerging Digital Genres,* 2026.

ԹԵՄԱՏԻԿ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԼԱՆ

Մուտք / Շաբաթ	Թեմա / Դասավանդման մեթոդ	Նյութը	Ինքնուրույն աշխատանք / առաջադրանք
Սեպտեմբերի 5	Ներածություն: Դասընթացի կառուցվածքի, նպատակների և գնահատման չափանիշների ներկայացում: Պրակտիկ աշխատանքի պլանավորում:		Խմբային քննարկում
Սեպտեմբերի 12	*Վերլուծական ժանրերի առանձնահատկությունները:* Քննարկվում են *վերլուծական լրագրության խնդիրներն ու հիմնական գործիքները*: Ուսանողները ներկայացնում են իրենց հոդվածների պատրաստման ընթացքը՝ զուգահեռաբար անդրադառնալով տեսական հարցերի:		Լսարանային առաջադրանք: Ուսանողներին հանձնարարվում է վերլուծել սեփական փորձն անցյալ ուսումնական տարում, ապա ընթացիկ հոդվածի պատրաստման աշխատանքը՝ կիրառելով *խնդրի սահմանման տարբերակներ, ժանրի առանձնահատկություններ ու թելադրանքներ, ստեղծագործական մտահղացման թելադրանքներ, տեղեկության աղբյուրներ, հոդվածի կառուցվածք* եզրերը:
Սեպտեմբերի 19	*Վերլուծական ժանրերը գործնականում: «Տարբերությունների լայնույթը»:* Ընթերցվում են ուսանողների պատրաստած հոդվածները: Քննարկվում է՝ ինչով են դրանք նման և ինչով են տարբեր: Քննարկման հիման վրա անդրադարձ է կատարվում հոդվածի «դասական» սահմանումներին և ժամանակակից լրագրության ազատություններին:	1, 9, 10	Տնային առաջադրանք: Ուսանողներին հանձնարարվում է վերջնական տեսքի բերել իրենց հոդվածները՝ կիրառելով կուրսընկերների և դասախոսի խորհուրդները:

Սեպտեմբերի 26	*«Խնդրի ձևակերպումը հոդվածում: Հուշումներ և տարբերակներ»:* Քննարկվում են հոդվածի խնդրի ձևակերպման համար օգտակար որոշ ուղղություններ՝ *հիմնավորում վիճակագրության միջոցով, տարբեր շաղկապների փորձարկում՝ խնդրի պատճառահետևանքային և այլ առնչությունները բացահայտելու նպատակով* և այլն:	1	Լսարանային աշխատանք: Ուսանողներին առաջարկվում է հանրային կարևորություն ունեցող որևէ պնդում ձևակերպել: Ընտրվում է առաջարկված պնդումներից որևէ մեկը: Այդուհետև ուսանողներն ինքնուրույն փորձում են գտնել տվյալ պնդումը զարգացնելու մի քանի տարբերակներ՝ կիրառելով տարբեր շաղկապներ: Քննարկվում են առաջարկված տարբերակները: Վերլուծվում է՝ *ինչպիսի տեղեկության կարիք է առաջացնում* այս կամ այն շաղկապի բերած տրամաբանությունը: Միասին հաշվում ենք՝ որ տրամաբանությունն է գերակա եղել՝ պատճառի՞, ժամանակային հաջորդականությա՞ն, հիմունքի՞ և այլն: Տնային առաջադրանք: Ուսանողներից յուրաքանչյուրը որևէ լրատվամիջոցից պետք է ընտրի իր կարծիքով հաջողված մի հոդված և վերլուծի, թե ինչ տրամաբանական կապեր է պարունակել տեքստը՝ *կուգահեռներ, հակադրություններ, իրադարձային կարգացման հաջորդականություն* և այլն:

Հոկտեմբերի 3	Քննարկվում են ուսանողների վերլուծությունները: Ընդհանրացում է արվում՝ որն է փաստերի ու հանգամանքների միջև տրամաբանական կապեր ստեղծելու՝ հոդվածագիր լրագրողների առավել հաճախ կիրառած եղանակը: Առանձին անդրադարձ է նվիրվում *հակադրությունների ստեղծմանը*: Քննարկվում է՝ *ինչպես ստեղծել տրամաբանական սխալներ չպարունակող հակադրություններ:*		Տնային առաջադրանք: Ուսանողներին հանձնարարվում է լրագրողական որևէ նյութ գրել իրերց նախընտրած թեմայով ու ժանրով:
Հոկտեմբերի 10	Քննարկվում են ուսանողների գրած նյութերը: Ուսանողները պատասխանում են այն հարցին, թե ինչու են ընտրել այս կամ այն ժանրը: Քննարկման հիման վրա անցում է կատարվում նոր թեմային՝ *«Հրապարակման պատրաստում՝ մեկնարկելով հաղորդակցային իրադրությունից և տեղեկատվական նպատակից»*: Անդրադարձ է կատարվում ժանրերի ընտրության հիմքերին: Նշվում է, որ ժանրերն ինքնին նպատակներ չեն, և ավելի արհեստավարժ մոտեցում է *ընտրել ժանրը տեղեկատվական մտահղացման համատեքստում՝* որպես դրա բաղադրիչ:	1, 8	Խմբային քննարկում
Հոկտեմբերի 17	*Աշխատանք տեղեկության տեքստային աղբյուրների հետ*	2, 3	Լսարանային աշխատանք: Ուսանողները բացում են հանձնարարվող տեքստային աղբյուրը, որը կարող է լինել, օրինակ, կառավարության որևէ նիստի արձանագրություն:

			Հպանցիկ ընթերցմամբ ընդհանուր պատկերացում են կազմում տեքստի մասին, այդուհետև հարցեր են ձևակերպում, որոնց պատասխաններն անհրաժեշտ են տեքստի ամբողջական ընկալման համար: Հարցերի պատասխաններն այդ փուլում չեն գտնում: Փոխարենը լուր են գրում հպանցիկ ընթերցված տեքստի հիման վրա: Առաջադրանքը նպատակ ունի զարգացնել *համատեքստերի հետ աշխատելու վարպետությունն ու համատեքստերի նկատմամբ զգայունությունը*: Քննարկվում է՝ ինչպես կարելի է *խուսափել համատեքստը խեղաթյուրելու, տրամաբանությունը փոխելու և կապերն անտեսելու սխալներից,* անգամ երբ մի քանի րոպե ունեն թեմային ծանոթանալու և դրա մասին գրելու համար:
Հոկտեմբերի 24	*Աշխատանք տեղեկության տեքստային աղբյուրների հետ (շարունակություն)*	2, 3	Տնային առաջադրանք: Նյութ պատրաստել կառավարության տվյալ նիստի վերաբերյալ՝ մեկնարկելով դասի ընթացքում կազմած հարցերից: Առաջադրանքը ենթադրում է կառավարության նիստի

			մասին պատմել ոչ թե տեղեկատվական ձևաչափով, այլ վերլուծական, քանի որ նախապես ձևակերպված հարցերի առկայությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ուսանողի առավելապես այս կամ այն հարցերն են հետաքրքրում: Ուսանողներին առաջադրանք է տրվում *տեքստում սահմանել իրենց դիտակետը և չխաբել ընթերցողին*:
Հոկտեմբերի 31	*Ընթացիկ քննություն*		
Նոյեմբերի 7	*Տեղեկության կրճատման սկզբունքները:* Մեկ անգամ ևս անդրադարձ է կատարվում նախորդիվ քննարկված տեքստային աղբյուրին: Քննարկվում են դրա կրճատման և ընտրության, ինչպես նաև նոր՝ պակասող տեղեկությունների հավելման սկզբունքները տարբեր ժանրերի դիտանկյունից:	7	Լսարանային աշխատանք: Ուսանողները բաժանվում են խմբերի և կրճատում նյութը՝ ըստ տարբեր ժանրերի պահանջների: Ամեն խումբն աշխատում է մեկ ժանրի շրջանակներում:
Նոյեմբերի 14	*Հոդվածի «սահմանները». լոնգրիդ:* Ուսանողները դասի ընթացքում ծանոթանում են տվյալ ժանրով գրված որևէ հրապարակման և ապա քննարկում այն: Ցույց են տրվում պատմելու եղանակների առանձնահատկությունները լոնգրիդներում:	10	Տնային առաջադրանք: Գրել նոր հոդված և վերլուծել այն *պատմելու եղանակների* տեսանկյունից:
Նոյեմբերի 21	*Քննարկվում են ուսանողների պատրաստած հոդվածները կամ դրանց պատրաստման ընթացքը: Քննարկումն ընթանում է նոր թեմայի*	1	Տնային առաջադրանք: Ուսանողներին հանձնարարվում է իրենց նախորդ նյութի թեմայով մեկ այլ նյութ գրել՝

	ուղղությամբ՝ «Փաստը՝ որպես նպատակ, գործիք և արտահայտչամիջոց»: Դասի ավարտին ձևակերպվում են դուրս բերված հիմնական դրույթները:		հոդվածի կամ իրենց ընտրած որևէ այլ ժանրով:
Նոյեմբերի 28	Քննարկվում են կատարված աշխատանքի արդյունքները: Որպես հանձնարարության կատարումն ամփոփող քննարկման վերնագիր՝ ձևակերպվում է ուսումնասիրվող նոր թեման՝ *«Նույն թեման՝ լուսաբանման տարբեր եղանակներով»*:	1, 10	Տնային առաջադրանք: Ուսանողները ծանոթանում են նույն թեմայով գրված երեք տարբեր նյութերի, ապա վերլուծում են դրանց առավելություններն ու թերությունները: Առաջադրանքը կատարելու մեկ այլ տարբերակ է *թեմատիկ մամուլի տեսությունը*, որի դեպքում ուսանողներն իրենք են ընտրում համեմատվող նյութերը:
դեկտեմբերի 5	Քննարկվում են ուսանողների կատարած վերլուծությունները: Նոր թեմա՝ *«Տեղեկություն տեղեկություն գտնելու ճանապարհի մասին»*: Ուսանողներին առաջարկվում է իրենց փորձից հիշել իրավիճակներ, երբ հարկ են համարել այս կամ այն թեման լուսաբանող իրենց լրագրողական տեքստում պատմել նաև՝ ինչպես են հանգել այս կամ այն աղբյուրին դիմելու, տեքստն այս կամ այն կերպ շարադրելու գաղափարներին: Ապա փորձում են վերլուծել՝ որ դեպքերում է, որ տեքստի պատրաստման ընթացքին վերաբերող այդ պատմությունները չեն ներառվում տեքստում, բայց պատմվում են լսարանում՝	1	Խմբային քննարկում

	իրենց պատրաստած լրագրողական նյութերն ընթերցելուց առաջ: Ըստ այդմ՝ քննարկվում է «բաց թողնվող» հանգամանքների նշանակությունը:		
դեկտեմբերի 12	*Կիսամյակն ամփոփող էսսեին վերաբերող հարցերի քննարկում*: Տրամադրվում են հղացքները, որոնց շուրջ պետք է կառուցել ամփոփիչ էսսեն: Քննարկվում են ժանրի առանձնահատկությունները:		Տնային առաջադրանք: Գրել ամփոփիչ էսսե՝ պատմելով քննարկված մասնագիտական հղացքների հետ աշխատանքի մասին:
դեկտեմբերի 19	Ամփոփիչ էսսեի նախնական գնահատում և այն բարեփոխելուն ուղղված հանձնարարություններ:		Խմբային քննարկում

Խմբագրման փորձից

Մասնակիցներից շատերը եկել էին փառատոնին միայն աշխատանք փնտրելու հեռանկարով, նրանց օրը Carier city fest-ում իրական ժամանցի վերածվեց, թե ինչպես, պատմեցին հենց նակիցները.

եկել էի 20 րոպեով ընդհանուր ծանոթանալու միջոցառմանը, աշխատատեղերին, բայց են 2 ժամ է՝ այստեղ եմ: Ամեն քայլափոխի տաղավարներում բրենդները կրեատիվ խաղեր առաջարկում, մրցույթներ, նվերներ: Հենց նոր ինձ բարիստան սովորեցնում էր կապուչինո որատել, ու հիմա իմ պատրաստածն եմ խմում: Ընկերներս էլ մյուս տաղավարներում են՝ ղերով ու մրցույթներով տարված»:

երներն էլ են ոգևորված. նրանցից շատերն արդեն գտել են հարմար աշխատանք, CV-ներ են ել դրական պատասխանի ակնկալիքով:

Փառատոնի օրակարգում կան նաև ինֆորմացիոն միջոցառումներ, բաթլներ, պանելային քննարկումներ այնպիսի թեմաների շուրջ, որոնք կարևոր են ինչպես կարիերան նոր սկսողների, այնպես էլ ոլորտում կայուն և երկարատև հաջողության ձգտողների համար:

Հիշեցնենք, որ Երևանում Carier city fest փառատոնն անցկացվում է արդեն 4 տարի»:

Commented [S1]: վերածվեց: Թե ինչպես, ...

Commented [S2]: Կարելի է բացատրել բառը փակագծերում:

Commented [S3]: Դարձյալ գրում ես այնպես, կարծես շատ հայտի բան ես ասում. "բաթլ" անգլերեն բառը նշանակում է ճակատամարտ, իսկ ի՞նչ է նշանակում այս միջոցառման համատեքստում:
Եթե անգամ դա ընկերության օգտագործած բառն է, դու պետք է թարգմանես այն, բացատրես: Եվ դա ոչ միայն ընթերցողիդ հասկանալի բան ասելու կամ օտարաբանություն չկիրառելու նպատակով, այլև կազմակերպիչների ոճի հետ չնույնանալու: Հիշո՞ւմ ես՝ ինչ էի ասում պատմածիդ նկատմամբ հեռավորություն հաստատելու մասին, մանավանդ եթե առնտրային կամ այլ տեսակի շահի հետ գործ ունես:

Commented [S4]: Մեկը մեկին չի հասկանում: Կարիերան նոր սկսողների «հասկանիշը» կլինեն վաղուց ոլորտում աշխատողը, ոլորտի «հնաբնակը» և այլն. . .

«4. Ո՞րն է հյուրատների կառուցման ձեր նպատակը:

«Մեր հյուրատները ի սկզբանե կառուցվել են մարդկանց անմոռանալի հանգստը ապահովելու համար: Մենք բոլորս գիտենք, որ Հայաստանում շատ են ռեզորտները, որոնք հիմնականում կենտրոնացած են երկու կամ երեք քաղաքներում,: մեր նպատակն է մարդկանց ծանոթացնել մեր տարածաշրջանին, որը կարծես մոռացված է, շատերը նույնիսկ անտեղյակ են, որ Հայաստանի քարտեզի վրա գոյություն ունի այդպիսի տեղանք: Մեր տարածաշրջանը նույնպես պատմական մեծ նշանակություն ունեցող և հրաշալի բնական աշխարհով տեղանք է, որտեղից, համոզված եմ, մարդիկ շատ մեծ տպավորություններով կվերադառնան: Հիմնական նպատակը հյուրատների կառուցման նախ և առաջ մարդկանց հանգստի ապահովումն է բնության գրկում, և երկրորդը՝ ծանոթացնել մեր աշխարհին, մեր բնությանը և մեր տարածաշրջանին, որը նույնպես ասելիք ունի»:

5. Ինչո՞վ են «Կարմիր հողեր»-ը տարբերվում մյուս հանգստյան գոտիներից:

«Նախ և առաջ տարբերվում է հենց իր գաղափարով, թե ինչպես է այն ստեղծվել և ինչի համար, երկրորդը՝ եղբայրս հենց իր ձեռքերով է կառուցել, իհարկե իր ընկերների և հայրիկիս աջակցությամբ: Նրա ցանկությունն էր իր ձեռքերով կառուցել, երրորդը՝ մեր հյուրատները բավականին հեռու են գտնվում մեկ մյուսից [...]»:

Commented [S5]: Դարգունակ հարց է, Վ*** ջան, բիզնեսը միշտ էլ սկսում են նախ շահույթ ստանալու համար:

Commented [S6]: հանգստյան տները

Commented [S7]: Եթե մեկ հանգստյան տան մասին է խոսքը, պիտի լինի "ինչով է տարբերվում", բայց քանի որ հանգստյան տները մի քանիսն են, պիտի գրել «ինչով են տարբերվում", իսկ զրուցակցիդ խոսքում "է"-ն դարձնել "են": Իսկ եթե նկատի ունենանք, որ առայժմ միայն մեկ հանգստյան տուն է գործում, պետք է հարցդ եզակի թվով տալ. . . Մի խոսքով՝ պետք է կողմնորոշվել: 😊

Ուսանողների հետ ֆեյսբուքյան զրույցների փորձից

18:42

Ответы

Մարիամ Կարապետյան
Քո գրած նյութն անհասկանալի ժանրով, անհասկանալի հանգամանքներում, անհասկանալի տեղից գրված նյութ էր, չուներ ժուռնալիստական նյութին հատուկ տեղի ու ժամանակի, հանգամանքների որոշակիությունը: Մենք այդ անորոշությունը վերացրինք՝ պատմելով իրադարձության անսովոր հանգամանքների, քո գրելու անսովոր եղանակի մասին:

1 нед. Нравится Ответить 1

Մարիամ Կարապետյան
Հիշում եք, չէ՞, մի առիթով ասացի՝ երբ էշը ցեխն եք գցել և ոչ մի կերպ չեք կարողանում հանել նրան, այնքան ցեխոտեք նրան, որ արվեստի գործ դառնա, ասենք՝ ցեխոտ իշուկի արձան: 😀 Պակասությունն ընդգծելը,անվանելը, դրա մասին պատմելը ևս պակասությունը հաղթահարելու ձև է:

1 нед. Нравится Ответить 1

18:46

Ответы

Վիկա ջան, սա ավելի «անմեղ» դեպք է, բայց հաճախ այնպիսի կարծիքներ են հնչում, որոնք կարող են սոցիալական կամ քաղաքական շեշտեր ունենալ, որոնց առնվազն միակողմանիությունը լրագրողը կարող է զգալ կամ չզգալ: Այս վերջին դեպքն ավելի բարդ է: Կարո՞ղ է արդյոք լրագրողը գլուխն ազատել «ամեն կարծիք էլ կարող է գոյություն ունենալ» կարգախոսով: Խորքային առումով սա կեղծ օբյեկտիվություն է: Եթե նույնիսկ գլուխ չես հանում կարծիքի բովանդակությունից, պիտի դրա ձևից կռահես, որ կոնֆլիկտն ավելի հեռուն է գնում: Լավ լրագրողը թաքնված կոնֆլիկտներն էլ պիտի որսա: Մի քանի տարբերակներ կարող են լինել: Մեկը՝ փորձել այնքան համակողմանի ներկայացնել հնչած բոլոր դիրքորոշումները, որ կոնկրետ այդ մեկ դիրքորոշումն այդքան ընդգծված չլինի, դառնա քննարկման բևեռներից մեկը: Իսկ եթե կարծիքը գեղեցիկ է եղել

Ваш ответ...

18:47

Ответы

Մարիամ Կարապետյան
Հասմիկ ջան, հարցազրույցն ինչ-որ իմաստով ամենից հեշտն է, մանավանդ երբ գրավոր պատասխաններ են ուղարկում, իսկ հարցերը մոտավորապես այն հարցերն են, որոնք տեսնում ենք բոլոր նման հարցազրույցներում: Կարևոր պահ կլինի այն, որ հայտնաբերեք հարցազրույցի բարդությունը: Այդ բարդությունը նշանակում է կոնկրետ քո նյութի դեպքում հերոսիդ դերերի իմացություն, դերերից կոնկրետ օրինակներ ու մեջբերումներ անելով՝ հարցերի ձևակերպում այնպես, որ նույն հարցերը հնարավոր չլինի տալ մեկ այլ մարդու հետ զրուցելիս: Սա կարևոր պահ է:

6 нед. Нравится Ответить

Մարիամ Կարապետյան
Իսկ մինչ այդ ես ուղղում եմ առավելապես ձևակերպումները, լեզվական սխալները, ավելի հետաքրքիր դարձնելու համար մուտքային հատված եմ ավելացնում և այլն:

Ваш ответ...

18:57

Ответы

Մարիամ Կարապետյան
Ճիշտ ես, կբացեին ու կկարդային: Բայց չէ՞ որ պրոֆեսիոնալ լրագրողը միայն դիտումներ կորզելու մասին չէ, որ մտածում է: Արի մտածենք այդ բառի հետ կապվող իմաստների մասին: Ո՞ւմ ենք «տարված» անվանում. նրանց, ովքեր ինչ-որ գործի մեջ խորությամբ են մխրճվում: Եվ այդ բառը միշտ հեգնանքով ու հումորով ենք ասում: Վերնագրելով նյութն այդպես՝ դու վերարտադրում ես տարածված կարծրատիպը: Քո բնութագրումն անմեղ բնութագրում չէ. այն սոցիալական իմաստ է բերում: Քո հերոսուհու մասին պատմությանն ավելացնում է այդ բառի հետ կապվող կիսահեգնական զվարճությունը:

1

10 нед. Нравится Ответить

18:45

Մարիամ Կարապետյան

հավանականությամբ չէր ունենա: Տեղեկատվական կարող էր լինել, եթե, օրինակ, ամերիկաբնակ որևէ պաշտոնյայի հետ զրուցեիր: Քո զրուցակիցը երիտասարդ աղջիկ էր՝ թեթև-սոցցանցային լուսանկարով: Նա, իհարկե, տեղեկություններ հաղորդում էր, բայց նրա տեղեկություններն այնպիսին չեն, որ կարողանանք, ասենք, հղում անել դրանց Ամերիկայում կարանտինի մասին նյութ պատրաստելիս: Դրանց մասին կարող ենք պատմել մեր ծանոթներին: Բայց դու գտել ես ձևը, որ այդ տեղեկությունները նյութ դառնալու ենթակա լինեն. հարցազրույցը լավ տարբերակ է: Միայն թե այս դեպքում էլ պետք է շեշտադրել քո զրուցակցի տեղեկության ոչ պաշտոնականությունը: Գրելուդ ոճը պիտի համապատասխանի հերոսուհուդ լուսանկարի ոճին, նրա պատմության կարճությունը պետք է ինչ-որ բանով փոխհատուցվի: Միակ հնարավոր տարբերակը կիսախաղարկային, խոսակցական ոճի ընդգծումն է:

3 нед. Нравится Ответить 1